ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 26.02.1980
Ծննդավայր՝ Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ

Մ. Հարությունյանը սովորել է Արցախի Ա. Իսահակյանի անվան թիվ 10 միջնակարգ դպրոցում (1986-1996 թթ.): 1998 թ. ընդունվել է Արցախի պետական համալսարանի(ԱրՊՀ)հումանիտար ֆակուլտետի պատմության բաժինը: Առաջին կարգի դիպլոմով ավարտելով համալսարանը՝ նա 2002-2004 թթ. ուսումը շարունակել է Արցախի պետական համալսարանի մագիստրատուրայում՝ «Պատմություն» մասնագիտությամբ (ավարտել է առաջին կարգի դիպլոմով), իսկ 2004 – 2007 թթ՝ նույն համալսարանի ասպիրանտուրայում («Պատմություն» մասնագիտությամբ):

2008 թ. Մ. Հարությունյանին շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Գիտական թեմայի խորագիրն է՝ «Մշակութային կյանքն Արցախում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին»: 2009 թ. Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոցի» համալսարանի գիտական խորհրդի որոշ-մամբ նրան շնորհվել է դոցենտի կոչում:

2008-2011թթ. Մ. Հարությունյանը սովորել է՝ Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոցի» անվան համալսարանի հումանիտար ֆակուլտետի Իրավաբանական բաժնում (ավարտել է առաջին կարգի դիպլոմով): 2014 թ. նա սովորել է “Educational Planet” ուսումնական կենտրոնում՝ անգլերեն լեզվի ուղղվածությամբ: Նույն թվականին ստացել է անգլերեն լեզվի՝ Elementary, Pre-Intermediate and Intermediate

մակարդակները ներառող վկայական, իսկ 2019 թ.՝ անգլերենի լեզվի TEFL վկայական (B1 մակարդակը): Տիրապետում է նաև ռուսերեն, անգլերեն, իտալերեն, իսպաներեն, մասամբ՝ հունարեն և ֆրասերեն լեզուների:

2002-2010 թթ. Մ. Հարությունյանն աշխատել է Արցախի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի պատմության ամբիոնում՝ որպես կուրսղեկ, դասախոս, ավագ դասախոս: 2008-2009 թթ. վարել է՝ Արցախի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի հումանիտար ֆակուլտետի պատմության ամբիոնի վարիչի, իսկ 2009-2010 թթ՝ նույն համալսարանի հումանիտար ֆակուլտետի դեկանի պաշտոնները: 2009-2010 թթ.՝ որպես դասախոս նա աշխաատել է Արցախի պետական, 2013-2014 թթ.՝ Երևանի «Ուրարտու» համալսարաններում, իսկ 2021 թ.՝ Արևմտյան Ուկրաինայի ազգային համալսարանի Երևանի կրթագիտական ինստիտուտում (որպես ավագ դասախոս): Ակտիվ մասնակցություն է ունեցել ուսանողների պատմաճանաչողական արշավանքներին, ղեկավարել կուրսային և ավարտական աշխատանքներ:

2013թ.-ից առ այսօր Մ. Հարությունյանն աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում՝ որպես գիտաշխատող, ավագ գիտաշխատող:

Գիտական հետաքրքրությունների շրջանակ է՝ Հայ ժողովրդի պատմության արդի հիմնախնդիրներ, հայ մշակույթի պատմության տարբեր բնագավառների ուսումնասիրություն:

65-ից ավելի հոդվածների (որոնցից 2-ն ընդգրկված են Scopus/Webofscience հեղինակավոր ամսագրերում), 2 մենագրության, 1 կազմված մենագրության, 1 ուսումնական ձեռնարկի, 1 ուսումնական ծրագրի հեղինակ է: Գրաախոսել է մի շարք գիտական հոդվածներ և աշխատություններ: Մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների:

Անկուսակցական է :